

թեան աստուածեղէն գրոց, եւ ոչ վարժ հրահանգաւք առաքինութեանցն, եւ ոչ հաւրն իւրեանց չափոց ինչ նմանեցին միտ եղեալ, եւ ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան, եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ եղին, եւ ոչ զիւրեանց հոգեւորն պատուականութիւն՝ յաւիտենական կենացն զպատիւ ինչ եղին ի մտի: 29 Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, եւ պանծացեալք յիւրեանց յանցաւոր սնոտի ի մարմնաւոր տոհմականութիւնն ազգականութեան, զինուորական զվարսն ընտրեցին: 30 Վասն այնորիկ անընտիրք եղեալք, ի հպարտութեանն՝ խոտեցան ըստ յառաջազոյն տեսլեանն հաւրն իւրեանց. ոչ մտին ի լուծ աստուածապաշտութեանն: 31 Եւ ոչ այլ ոք ի նմին տանէ զաւակին Գրիգորի գոյր ոք. զի այնչափ իսկ կային մարմնաւոր զաւակին, եւ սոքա ինչ ոչ թէ արժանի հարցն գնացեալ նմանեցին վարուց: 32 Եւ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութիւն զխաւորութեան քահանայապետութեանն վերակացութեանն ոք տերունական տանն հրամանատարութեանն կատարեալ, պաշտաման յաջորդէր:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս վարուց եւ գործոց մեծին Դանիելի՝ առն Աստուծոյ, եւ թէ որպէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան, եւ կամ ո՛րպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ:

2 Բայց յայնժամ դեռ եւս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիել, այր սքանչելի: 3 Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու եւ զխաւոր Եկեղեաց նահանգին Տարաւնոյ, Գրիգորի ձեռական՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւնն զայն առանձինն. այլ վերակացու եւ հրամանատար² տեսուչ եւ հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս. այլ եւ ի կողմանս Պարսից յաւտար տեղիս քարոզեաց սա, եւ անթիւս ի մոլորութենէ դարձոյց:

4 Եւ էր սա ազգաւ ասորի. եւ ունէր սա զաստիճան աթոռոյն զխաւորութեան Տարաւնոյ, ի մեծն եւ նախ զառաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամենայն հայաստանեայց: 5 Այս ինքն նախ եւ զառաջին եւ զխաւոր տեղին պատուական. զի յառաջ նախ անդ շինեալ էր սուրբ եկեղեցին, եւ ուղղեալ սեղան յանուն Տեառն: 6 Նոյնպէս եւ ի ներքոյ քան զնա մարգարեանոցն Յովհաննու, նոյնպէս մաւտ ի տուն Տեառն Հանգիստ առաքելոցն: 7 Արդ այս տեղիք վասն յառաջակարգութեան՝ կանոնաւ ի հայրապետացն եւ ի թագաւորացն պատուեալք լինէին. որպէս ի Դարանաղեաց զաւառին յեկեղեցին Թորդանու պատուին վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի եւ Արիս-

1 *Յօրին. միում* անընտիրք եղեալք ի հայրապետութիւնն խոտեցան

2 *Յօրին. միում* հրամատար